ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 05 » օգոստոսի 2025թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական Դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (01.08.2025թ.)՝ ժամը 12:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 04.08.2025թ.՝ ժամը 12:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված է, որ ընթացակարգը կազմակերպելու

կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր (գործարք) առկա չէ:

3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ	ՀԱԼԱԲՅԱՆ Փ. /Շ/ 35/ 49բն ԵՐԵՎԱՆ
«Յունիքոմփ» ՓԲԸ	ք. Երևան, Չարենցի 37
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2
ԱԷՅ ՍՊԸ	ք. Երևան, Աղբյուր Սերոբի փողոց, շենք 11, բնակարան 59
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
«ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ	ք. Երևան, Խաղաղ Դոնի փող. 27շ. 46բն
ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ	ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, 0038, ԱԲԵԼՅԱՆ 6/1, Բ601 ՏԱՐԱԾՔ

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից, հիմնավորումներ ներկայացնելու մասին

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքների մասին

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքներն են.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ	0	80000000	20%	96000000	30000000	20%	36000000	
1	«Յունիքոմփ» ՓԲԸ	0	33150000	20%	39780000	31668500	20%	38002200	
2	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	0	44000000	20%	52800000	17671750	20%	21206100	
2	ԱԷՅ ՍՊԸ	0	20825000	20%	24990000	17880000	20%	21456000	
2	«Յունիքոմփ» ՓԲԸ	0	37671416.67	20%	45205700	37671416.67	20%	45205700	

2	Էյչ Գրուպ ՍՊԸ	0	41666666.67	20%	50000000	41666666.67	20%	50000000	
2	«ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ	0	80000000	20%	96000000	80000000	20%	96000000	
2	ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ	0	80000000	20%	96000000	80000000	20%	96000000	
3	ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ	0	25000000	20%	30000000	23000000	20%	27600000	
3	«ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ	0	50000000	20%	60000000	50000000	20%	60000000	
3	«Յունիքոմփ» ՓԲԸ	0	72450000	20%	86940000	72450000	20%	86940000	
3	ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ	0	80000000	20%	96000000	80000000	20%	96000000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 04.08.2025թ.՝ ժամը 12:30-ին և

- 1-ին չափաբաժնի մասով ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
- 2-րդ չափաբաժնի մասով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
- 3-րդ չափաբաժնի մասով ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2025թ. օգոստոսի 7-ին՝ ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Աիդա Հովհաննիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 07 » օգոստոսի 2025թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական Դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ նաև հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին

1.1 ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.2 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.3 ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

2.1 ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) մասնակցի կողմից ներկայացվել են կնքված տարբերակներով, այն դեպքում, երբ հայտում ներառվող փաստաթղթերը հաստատվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառվող փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը):

- 1-ին չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.2 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ,
- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 2-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.3 ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

Նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2025թ. օգոստոսի 11-ին, ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **օգոստոսի 8-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Նորայր Աղամալյան

Քարտուղար՝ _____ Աիդա Հովհաննիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 11 » օգոստոսի 2025թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական Դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքների վերաբերյալ

ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 2-րդ չափաբաժնի մասով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտը մերժել,
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ԱԷՅ ՍՊԸ-ի, «Յունիքոմփ» ՓԲԸ-ի, Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ի, ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ի, «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ի, «Յունիքոմփ» ՓԲԸ-ի, ՊՐԵՄԻՈՒՄ ՔՈՒԱԼԻԹԻ ՍՊԸ-ի հայտերը մերժել,

2.2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Նորայր Աղամալյան

Քարտուղար՝ _____ Աիդա Հովհաննիսյան